

## Դժբախտ պատահարներից ապահովագրության հակիրճ տեղեկատվական թերթիկ

Մինչև ապահովագրության իրականացումը հաճախորդները չեն անցնում բուժզննություն

### Ապահովագրական դեպքեր են համարվում հետևյալ իրադարձությունները

- Հաշմանդամության 1-ին, 2-րդ, 3-րդ կարգի ձեռք բերումը դժբախտ պատահարի կամ հիվանդության արդյունքում (այդ թվում՝ ինսուլտի, ինֆարկտի և օնկոլոգիայի արդյունքում 1-ին, 2-րդ, 3-րդ կարգի հաշմանդամության ձեռք բերում կամ մահ),
- Մահը դժբախտ պատահարի կամ հիվանդության արդյունքում:

«Դժբախտ պատահար» է համարվում անսպասելի, հանկարծակի իրադարձությունը, որը տարբերակվում է ըստ առաջացման բնույթի, վայրի և ժամանակի և որը հանգեցրել է Ապահովագրված անձի մարմնական վնասվածքի (այդ թվում՝ այրվածքի, ցրտահարության) և/կամ սուր թունավորման:

«Հիվանդություն» է համարվում Ապահովագրված անձի առողջության վիճակի խախտումը, բացառությամբ մարմնական վնասվածքի, կայուն նյարդային կամ հոգեբանական խանգարումների, էպիլեպսիայի, ՄԻԱՎ-ի/ՁԻԱՀ-ի կամ դրանց հետ կապված համախտանիշների կոմպլեքսի (անկախ այն բանից, թե ինչպես է այն ձեռք բերվել), որն առաջին անգամ ախտորոշվել է համապատասխան որակավորում ունեցող մասնագետների կողմից բժշկագիտությանը հայտնի օբյեկտիվ ախտանիշների և հատուկ հետազոտությունների հիման վրա և առաջին անգամ զարգացել է սույն Պայմանագրի գործողության ընթացքում:

«Հաշմանդամությունը» բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի կողմից սահմանված, Ապահովագրված անձի օրգանների և օրգան համակարգերի կայուն խախտումն է, որը պայմանավորված է Պայմանագրի գործողության ընթացքում ստացված մարմնական վնասվածքով և/կամ սուր թունավորմամբ, որն ուղեկցվում է կենսագործունեության սահմանափակմամբ, սոցիալական անլիարժեքությամբ և աշխատունակության սահմանափակմամբ):

### Ապահովագրական պատահարներից բացառություններ

Ապահովագրական դեպք չի համարվում, եթե պատահարը՝

- Ապահովագրված անձի հանցագործ կամ անօրինական գործունեության արդյունք է,
- Տեղի է ունեցել Ապահովագրված անձի կողմից ալկոհոլի կամ թմրանյութի օգտագործման հետևանքով,
- Առանց տվյալ կարգի վարորդական իրավունքի փոխադրամիջոց վարելու կամ փոխադրամիջոցի շահագործման ժամանակ դրա արտադրող գործարանի կողմից նախատեսված շահագործման կամ ճանապարհային երթևեկության կանոնների խախտման արդյունք է,
- Ինքնասպանության փորձ է (վնաս առողջությանը) կամ ինքնասպանություն (մահվան դեպքում),
- Առողջությանը կանխամտածված հասցված վնասի արդյունք է,
- Տեղի է ունեցել ռազմական գործողություններին, մասսայական վիճաբանություններին և փողոցային անկարգություններին Ապահովագրված անձի մասնակցության հետևանքով,
- Տեղի է ունեցել վտանգավոր սպորտաձևերով զբաղվելու արդյունքում (ավտո և մոտոսպորտ, օդապարիկով թռիչք, մարտարվեստ, ալպինիզմ, լեռնային եւ ջրային զբոսաշրջություն, ստորջրյա լող և այլն),
- Տեղի է ունեցել հիվանդության կապակցությամբ Ապահովագրված անձի հիվանդանոցային բուժման ժամանակ և տվյալ հիվանդության արդյունք է,
- Լիցենզավորված ավիաընկերության հաստատված չվացուցակից դուրս իրականացված թռիչքների ժամանակ տեղի ունեցած դեպք է:
- Ապահովագրված անձի սույն ապահովագրությունից Պայմանագրից սեփական կամ որևէ այլ շահ ունենալու մեջ ուղղակիորեն կամ անուղղակիորեն հետաքրքրված անձի քրեորեն պատժելի գործողության արդյունք է:

## Ի՞նչ պետք է անել Ապահովագրական պատահարի դեպքում

- Անհապաղ (առաջին իսկ հնարավորության դեպքում), սակայն ոչ ուշ քան ապահովագրության պայմաններում սահմանված ժամկետներում (ոչ ուշ քան 48 ժամվա ընթացքում այդ մասին հայտնել Ապահովագրողին: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ Ապահովագրված անձը հայտնվել է անգիտակից վիճակում կամ այնպիսի իրավիճակում, որն անհնարին է դարձնում Ապահովագրողին ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության մասին անհապաղ տեղեկացնելը) հայտնել Ապահովագրական ընկերությանը ապահովագրական պատահարի առաջացման մասին՝ զանգահարելով (+374 10) 31-10-10 շուրջօրյա հեռախոսահամարով,
- Ապահովագրական պատահարի առաջացման մասին հայտնել Բանկին,
- Ապահովագրական ընկերությանը ներկայացնել ապահովագրության պայմաններով սահմանված ուղեկցող փաստաթղթեր:

Ապահովագրական պատահարի առաջացման դեպքում ապահովագրական հատուցումը կատարվում է համաձայն Ապահովագրական ընկերության Ապահովագրության պայմանների: Ապահովագրական պայմանագրի գործողությունը կանոնակարգող կանոններն և հատուցման ընթացակարգին առավել մանրամասն կարող եք ծանոթանալ՝ այցելելով ապահովագրական ընկերության ստորև նշված ինտերնետային կայք:

### *«Ռուսգոսստրախս Արմենիա» ԱՓԲԸ*

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հյուսիսային պողոտա 1

Հեռ.՝ (+374 10) 59-10-10, 31-10-10, [www.rgs.am](http://www.rgs.am)